**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**N ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2017/ՄԾ-ՃՈ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** <<29>> 05 **2017թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ** -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ընդունելով 26.01.2017թ.-ին կնքված N ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2017/ՄԾ-ՃՈ գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2017/ՄԾ-ՃՈ ծածկագրով գնման պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 18 600 000 (տասնութ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Սույն թվականի առաջին եռամսյակում մատուցված ծառայությունների համար վերը նշված պայմանագրի թիվ 1 համաձայնագրով նախատեսվել էր վճարել 4 870 000 (չորս միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Սույն համաձայնագրով կողմերը հաստատեցին ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2017/ՄԾ-ՃՈ ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում մնացած եռամսյակների ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը, որը կազմում է 13 730 000 (տասներեք միլիոն յոթ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.3 Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումը Պատվիրատուն կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

1.4 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կատարող |
| --- | --- |
| ՀՀ ոստիկանություն | «ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13 շ., բն. 30 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյան մ/ճ |
| Հ/Հ 900013150041 | Հ/Հ 163028030332 |
| ՀՎՀՀ 01840082 | ՀՎՀՀ 01254973 |
| հեռ. 010-59-60-39 | էլ. հասցեն՝ khv_84@mail.ru |
| Էլ. փոստ: policevahe@mail.ru | Հեռ. (091) 404073 |
| ____________ Ա.Համբարյան | ____________ Կ. Հարությունյան |
| /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) /տնօրեն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
<<29>> 05 2017թ.
Համաձայնագիր N 2
*N ՀՀ ԿԱ Ո-ՊԸԾՁԲ-2017/ՄԾ-ԾՈ գնման պայմանագրի*

Վճարման ժամանակացույց

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ԾՈ արտաբյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1. | Շենքերի և դրանց հարող տարածքների սպասարկման ծառայություններ | | | | | 3130 000 | 3130 000 | 7 130 000 | 7 130 000 | 7 130 000 | 13 730 000 | 13 730 000 | 13 730 000 | 13 730 000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | 13 730 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 010-59-60-39**
**Էլ. փոստ. policevahe@mail.ru**

**Ա. [illegible]մբարյան**
**ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/**
**(ստորագրություն)**

**Կ ա տ ա ր ո ղ**
**«ԷՅՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
**ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13 շ., բն. 30**
**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շահումյան մ/6**
**Հ/Հ 163028030332**
**ՀՎՀՀ 01254973**
**Էլ. հասցե՝ khv_84@mail.ru**
**Հեռ. (091) 404073**

**Կ. [illegible]**
(ստորագրություն) /տնօրեն/